

# ՆՈՐ ԻՄՐԱՅԷԼԻ ՍԱՂՄՈՒՆԵՐԻՑ

## I

Հայածեսցէ ապա թշնամին զանձն իմ.  
հասցէ և կոխեսցէ յերկիր զկեանս իմ.  
և զփառս ի հող քնակեցուցէ:  
(Սաղմոս):

Երբ սրտանմլիկ ողբի սուր ծայներ  
Բո՞ւսելիքին հասնում են արագ,  
Եւ ահա՛ տխուր, սգալի պատկեր  
Աչքերիդ առջեւ, որպէս մի ճարակ.  
Տեսնում ես գիւղը մի վայրկեան առաջ  
Բնակիչներով խաղաղ ու արդար  
Կեանք էին վարում եւ օրհնում Աստուած—  
Ահեղ բոցի մէջ եւ սարսափահար...  
Խանձուած ու այրուած շրերով, դէմքով  
Իր կրծքին սեղմած կաթնասուն մանկան  
Մայրն աղաչում է, լալիս է հերքով—  
Բայց չի ազատում ո՛չ ինք, ո՛չ տղան...  
Եւ ահա՛ ճշի, լացի, կոծի հետ  
Անասունների մայն ու բառաչին,  
Ահա՛ մի վայրկեան—եւ եղաւ անհետ  
Բանական մարդը, որպէս անասուն...  
Այստեղ է, այստեղ—սուր տէգի ծայրին  
Մանուկը կայտառ—երբ յղի մի կին  
Փախաւ հրդեհից՝ նեղքեցին փորը—  
Եւ տէգի ծայրն է մանկան օրորը—  
Երբ աղբատ, անտէրն խեղտում է կեանքից  
Եւ մարդու որդին ինչպէս մի երէ  
Հալածական է անսիրտ որսորդից,  
Չունի մի անկին հանգէի, շունչ քաշէ...  
Հարցմունք ես տալիս այդ դժուար ժամին—

Ո՛վ պիտի հասնի այդ ժողովրդեան  
 Եւ այդ սոսկանքի դառն ըուպէին  
 Մի կաթիլ ջուր տայ նրա փրկութեան.—  
 Հանգչի ու շնչէ աշխարհի վերայ  
 Եւ հոգին զգայ ազատ կեցութիւն,  
 Վերստին ծնուի կեանքով ապագայ  
 Հեռու նրանից այդ սոսկ գերութիւն...

## II

Որդիք մարդկան, մինչեւ  
 յե՛րբ էք խօստախրութիւն  
 (Սաղմոս)

Մի՛ գոռար, թող քո բերանդ բռնեն,  
 Մի՛ լար, մի խնդրիր—թող քեզ կտրատեն,  
 Մի՛ կանչիր խեղդեն քո բկից բռնած,  
 Ականջ, քիթ, բերան սրով յոշոտած...  
 Մի՛ արդարանար, քո ընտանիքը  
 Կինը, որդիքը ջարդուին, փշրուին,  
 Ջուր մի՛ աղօթիր—այդ արհաւիրքը  
 Աստուած է զրկել—իմանան, տեսնեն...  
 Բայց արի՛ւն դարձաւ դաշտ ու անդաստան,  
 Դէպ երկինք ցայտեց արեան կաթիլներ,  
 Աստուած, կուգէ՞ր—մարդիկ իմացան,  
 Էլ ո՞ւր ես թափում արեան հեղեղներ...  
 Բեզ են բողբոլում—Ամենագէտ ես,  
 Ինչո՛ւ չես թափում քո կայծակները,  
 Վրէժի, ոխի Աստուած հեռատես  
 Ձէ՛ որ ցամաքեց մարդկանց սրտերը...  
 Էլի՛ կախ գցիր գլուխդ—զարկեն,  
 Կացինով զարկեն—թռչի գլուխդ,  
 Ելի՛ խեղտուիր մինչ վերջին ըուպէն  
 Բռնի՛ր, մի թողնիր իմացուի շունչը...  
 Կտրատեն—մի՛ լար, ծակծակեն, լո՛իր,  
 Գոհացի՛ր, շնորհիր սրտիդ իղձերը,  
 Ողջ տնով, տեղով դու արիւն դարձիր  
 Թո՛ղ երկինք թռչեն արեան կաթիլները...

III

Ձի ահա մեղաւորք լարիցեն զաղե-  
ղոնս իւրեանց ձգել ընդ խաւար՝  
այնոցիկ, ոչք ուղիղ են սրտիւք...  
(Սաղմոս)

Դու կուզե՞ս տեսնել արտասուքների  
Հնաւանդ երկիր. հալածանքների  
Նոր սրբավայրեր . կամենա՞ս նայել  
Բիրտ տանջանքների, սոսկանքի պատկեր,  
Խաչ արիւնլուայ, եւ նոր Գողգոթան  
Ռ՛ւր բարձրացրին ժողովուրդն ամբողջ...  
Նա կսկիծի մէջ կանչեց բարձրաձայն՝  
«Ո՛, Աստուած, ինչո՞ւ դու մեզ թողիր ողջ»  
Այդ նոր ընդարձակ Գողգոթայի վրայ  
Երբ մի ժողովուրդ տանջուեց խաչի վրայ,  
Շարժուեց երկիրը իւր անդունդներից,  
Ջրերը ցամբեցին—փլուեցին լեռներ  
Խորտակուեց տաճար, եւ վարագոյրներ,  
Սուրբ անօթները փչացան նորից...  
Աշխարհն անհոգ էր, երբոր այս տեսան,  
Եւ պատմուճանը վիճակ են գցում.  
Գերեզման փորում... կարճատես մի ցաւ  
Բռնեց աչքերը աշխարհի անհուն.—  
Նա մոռացել է, թէ մի օր կը յարի  
Մեռեալը—կենդան. ո՛չ կեղծ աշխարհի—  
Արիւնով սնուած եւ քաջալերուած—  
Այլ գերեզմանի, սոսկ գերեզմանի  
Անհուն խորքերից, իւր հայրենիքից  
Ուր նա կայ վաղո՞ւց կենդանի թաղուած...  
Նա մի օր կը յարի՞,—արտասուքների,  
Տառապանքների, եւ շիրիմների  
Ձորը անկենդան՝ խաչ բարձրացրած—  
Իւր Գողգոթայից—այնտեղ ուր հիմայ.  
Մարդը չի ապրում, մարդն է մեռած...

ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ